



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2017 թվականի հունվարին (վերլուծություն)

2017 թվականի հունվարին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 9866 գործարք, որոնց քանակը 2016 թվականի դեկտեմբեր ամսվա համեմատ նվազել է 44.1 %-ով, իսկ 2016 թվականի հունվարի համեմատ՝ աճել 1.6 %-ով:

2017 թվականի հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2017 թվականի հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2017 թվականի հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2424 օտարման գործարքի 68.1 %-ը կազմել է առուվաճառքը, 31.1 %-ը՝ նվիրատվությունը և 0.8 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման գործարքի քանակի 36.8 %-ն

արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 36.0 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2017 թվականի հունվարին, 2016 թվականի դեկտեմբերի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքը նվազել է 44.7 %-ով, իսկ 2016 թվականի հունվարի համեմատ՝ աճել 3.2 %-ով:

2017 թվականի հունվարին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 62.3 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2017 թվականի հունվարին, 2016 թվականի դեկտեմբերի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 47.5 %-ով, իսկ 2016 թվականի հունվարի համեմատ՝ աճել 25.3 %-ով:

2017 թվականի հունվարին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով.

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	հունվար 2016 թ.	հունվար 2017 թ.	դեկտեմբեր 2016 թ.
Կենտրոն	428000	428250	428250
Արաբկիր	356800	357450	357450
Քանաքեռ-Զեյթուն	282900	281000	283350
Նոր Նորք	253700	254500	254500
Ավան	261350	261000	262100
Էրեբունի	252250	249800	252600
Շենգավիթ	257400	256500	258250
Դավթաշեն	276300	277300	277300
Աջափնյակ	250650	250000	251500
Մալաթիա-Սեբաստիա	243750	242500	244400
Նուբարաշեն	157050	157700	157700

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2017 թվականի հունվարին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2016 թվականի դեկտեմբերի համեմատ՝ նվազել է 0.4%-ով:

2017 թվականի հունվարին մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 192 բնակարան, որոնց քանակը 2016 թվականի դեկտեմբերի համեմատ նվազել է 45.3 %-ով, իսկ 2016 թվականի հունվարի համեմատ՝ մնացել է անփոփոխ:

2017 թվականի հունվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		հունվար 2016 թ.	հունվար 2017 թ.	դեկտեմբեր 2016 թ.
Արագածոտն	Աշտարակ	116000	116200	116200
	Ապարան	58100	58900	58900
	Թալին	66500	66900	66900
Արարատ	Արտաշատ	98500	99250	99250
	Մասիս	115800	115800	115800
	Վեդի	101550	101750	101750
	Արարատ	77200	77850	77850
Արմավիր	Վաղարշապատ	154100	154200	154200
	Արմավիր	121200	121250	121250
	Մեծամոր	87550	87600	87600
Գեղարքունիք	Սևան	99400	99300	99400
	Գավառ	60350	60800	60800
	Մարտունի	107700	107650	107700
	Վարդենիս	45050	45400	45400
	Ճամբարակ	28750	28800	28800
Լոռի	Վանաձոր	88500	88600	88600
	Ստեփանավան	74650	74900	74900
	Սպիտակ	99850	99950	99950
	Ալավերդի	55400	55950	55950
	Տաշիր	47350	47400	47400
	Թումանյան	11000	11000	11000
	Շամլուղ	8000	8000	8000
	Ախթալա	20500	20500	20500
Կոտայք	Աբովյան	155100	155100	155150
	Նոր Հաճն	128550	128500	128550
	Բյուրեղավան	108200	108200	108250
	Եղվարդ	109550	110050	110050
	Հրազդան	63800	63900	63900
	Ծաղկաձոր	292400	292400	292400
	Չարենցավան	85500	85500	85500
Շիրակ	Գյումրի	109250	109400	109450
	Արթիկ	67000	67400	67400
	Մարալիկ	40900	41150	41150
Սյունիք	Գորիս	123400	124200	124200
	Կապան	94650	95800	95800
	Սիսիան	92000	92350	92400
	Մեղրի	82650	83650	83650
	Քաջարան	94650	95000	95000
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց ձոր	Վայք	95000	95100	95100
	Եղեգնաձոր	125900	126550	126550
	Ջերմուկ	112950	113250	113300
Տավուշ	Դիլիջան	115200	115700	115700
	Իջևան	118450	118600	118600
	Բերդ	60300	60600	60600
	Նոյեմբերյան	50200	50600	50600
	Այրում	31850	31900	31900

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2017 թվականի հունվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2016 թվականի դեկտեմբերի համեմատ մնացել է անփոփոխ:

2017 թվականի հունվարին հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տան 255 առուվաճառքի գործարք, այդ թվում՝ Երևան քաղաքում՝ 77 գործարք, մարզերում՝ 178 գործարք: 2017 թվականի հունվարին, 2016 թվականի դեկտեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքի քանակը նվազել է 38.7 %-ով, ընդ որում, Երևանում՝ 34.7 %-ով, իսկ մարզերում՝ 40.3 %-ով: 2017 թվականի հունվարին 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 12.8 %-ով, ընդ որում, Երևանում՝ 71.1 %-ով, իսկ մարզերում՝ նվազել 1.7 %-ով:

2017 թվականի հունվարին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մ² և տնամերձի 400.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ² մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	հունվար 2016 թ.	հունվար 2017 թ.	դեկտեմբեր 2016 թ.
Կենտրոն	476100	476350	476350
Արաբկիր	383000	383200	383200
Քանաքեռ-Զեյթուն	295000	295300	295300
Նորք-Մարաշ	319200	318000	319550
Ավան	270500	270000	270750
Էրեբունի	239750	239900	239900
Շենգավիթ	255000	253000	255150
Դավթաշեն	276000	275000	276200
Աջափնյակ	250050	250300	250300
Մալաթիա-Սեբաստիա	238000	238250	238250
Նուբարաշեն	150800	150800	150800

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2017 թվականի հունվարին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2016 թվականի դեկտեմբերի համեմատ՝ նվազել է 0.2%-ով:

2017 թվականի հունվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մ² և տնամերձի 1000.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ² մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		հունվար 2016 թ.	հունվար 2017 թ.	դեկտեմբեր 2016 թ.
Արագածոտն	Աշտարակ	136200	136250	136250
	Ապարան	60050	60050	60050
	Թալին	69250	69250	69250
Արարատ	Արտաշատ	100000	100100	100100
	Մասիս	115100	115100	115100
	Վեդի	102300	102300	102300
	Արարատ	88000	88000	88000
Արմավիր	Վաղարշապատ	153100	153150	153150
	Արմավիր	107000	107000	107000
Գեղարքունիք	Սևան	94950	94950	94950
	Գավառ	57100	57100	57100
	Մարտունի	96100	96200	96200
	Վարդենիս	41100	41150	41150
	Ճամբարակ	31100	31100	31100
Լոռի	Վանաձոր	100800	100900	100900
	Ստեփանավան	91100	91200	91200
	Սպիտակ	114000	114050	114050
	Ալավերդի	50200	50300	50300
	Տաշիր	51900	51900	51900
	Թումանյան	12000	12000	12000
	Շամլուղ	14000	14000	14000
	Ախթալա	30000	30000	30000
Կոտայք	Աբովյան	157300	157350	157350
	Նոր Հաճն	129800	129800	129800
	Բյուրեղավան	120500	120500	120500
	Եղվարդ	116100	116100	116100
	Հրազդան	82600	82600	82600
	Ծաղկաձոր	305000	305000	305000
	Չարենցավան	83000	83000	83000
Շիրակ	Գյումրի	119250	119200	119350
	Արթիկ	63350	63400	63450
	Մարալիկ	52000	52000	52000
Սյունիք	Գորիս	130000	130050	130050
	Կապան	100650	100750	100850
	Սիսիան	96500	96500	96500
	Մեղրի	84600	84700	84750
	Դաստակերտ	11610	11610	11610
Վայոց ձոր	Վայք	90150	90150	90150
	Եղեգնաձոր	116750	116750	116750
	Ջերմուկ	131300	131300	131300
Տավուշ	Դիլիջան	115400	115800	115850
	Իջևան	123200	123200	123250
	Բերդ	60100	60100	60100
	Նոյեմբերյան	48300	48300	48300
	Այրում	36250	36250	36250

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2017 թվականի հունվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները

(ներառյալ տնամերձի միավորի գինը), 2016 թվականի դեկտեմբերի համեմատ մնացել է անփոփոխ:

Ընդհանուր առմամբ, 2017 թվականի հունվարին հանրապետությունում օտարվել է 776 միավոր (509.85 հա) հող, որից Երևանում՝ 47 միավոր (27.05 հա): Օտարված հողերն, ըստ նպատակային նշանակության, բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 507 միավոր (459.32 հա), որից Երևանում՝ 1 միավոր (0.04 հա),
- բնակելի կառուցապատման հող՝ 199 միավոր (18.99 հա), որից Երևանում՝ 26 միավոր (1.32 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 54 միավոր (5.29 հա), որից Երևանում՝ 17 միավոր (1.27 հա),
- արդյունաբերական օբյեկտների հող՝ 4 միավոր (0.56 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հող՝ 5 միավոր (1.19 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հող՝ 6 միավոր (21.29 հա), որից Երևանում՝ 2 միավոր (21.21 հա),
- անտառային հող՝ 1 միավոր (3.21 հա) մակերեսով Երևանում:

2017 թվականի հունվարին հանրապետությունում օտարված հողերից 563 միավորի (400.69 հա) նկատմամբ իրականացվել է առուվաճառքի գործարք, որից Երևանում՝ 34 միավոր (1.95 հա), նվիրատվության գործարք՝ 200 միավորի (108.24 հա), որից Երևանում՝ 6 միավոր (24.73 հա) և փոխանակության գործարք՝ 13 միավորի (0.92 հա), որից Երևանում՝ 7 միավոր (0.37 հա):

Հանրապետությունում 2017 թվականի հունվարին, 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքի քանակը նվազել է 23.3 %-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքի քանակը նվազել է 8.1 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ 42.4 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 50.0 %-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 204.27 հա, որից 201.25 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 14.7 %-ը կամ 83 միավորը (120.26 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, որից Երևանում՝ 8 միավոր (0.31 հա), իսկ 84.4 %-ը կամ 475 միավորը (280.35 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Երևանում՝ 25 միավոր (1.59 հա): 2017 թվականի հունվարին հանրապետությունում գրանցվել է վարձակալության իրավունքի վաճառքի 5 գործարք (0.08 հա), այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացված է 2017 թվականի հունվարին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		Հասարակական կառուցապատ. հողեր						բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		Հասարակական կառուցապատ. հողեր	
Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	
Երևան	0	0.00	0	0.00	4	0.20	4	0.11	1	0.04	0	0.00	17	0.91	7	0.64
Արագածոտն	8	2.64	1	0.15	1	0.04	1	0.01	63	28.63	0	0.00	4	0.28	0	0.00
Արարատ	2	2.77	0	0.00	3	0.02	0	0.00	61	26.67	1	0.29	13	1.10	3	0.05
Արմավիր	9	88.62	0	0.00	0	0.00	1	0.01	57	112.63	0	0.00	29	3.01	1	0.01
Գեղարքունիք	5	0.57	0	0.00	5	0.60	1	0.003	26	22.90	1	0.01	10	1.22	2	0.05
Լոռի	0	0.00	1	0.10	0	0.00	6	2.92	26	14.23	0	0.00	3	0.18	3	0.01
Կոտայք	8	16.48	0	0.00	8	0.03	1	0.01	40	22.82	0	0.00	19	1.74	2	0.04
Շիրակ	1	2.80	0	0.00	0	0.00	0	0.00	46	33.78	0	0.00	10	1.61	2	0.01
Սյունիք	2	1.50	0	0.00	2	0.004	0	0.00	7	3.44	0	0.00	2	0.14	1	0.01
Վայոց ձոր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	6	1.07	0	0.00	0	0.00	0	0.00
Տավուշ	0	0.00	0	0.00	2	0.41	4	0.21	7	1.58	0	0.00	1	0.10	1	0.05
Ընդամենը	35	115.38	2	0.25	25	1.30	18	3.27	340	267.79	2	0.30	108	10.29	22	0.87

Ստորև ներկայացված է 2017 թվականի հունվարին պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը.

	Ուղղակի վաճառք								Վաճառք աճուրդով									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր								բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		Հասարակական կառուցապատ. հողեր	
Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	
Երևան	5	0.02	0	0.00	3	0.01	2	0.01	3	0.29	0	0.00	0	0.00	1	0.19	2	0.10
Արագածոտն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	11	2.84	8	2.64	1	0.15	1	0.04	1	0.01
Արարատ	3	0.02	0	0.00	3	0.02	0	0.00	2	2.77	2	2.77	0	0.00	0	0.00	0	0.00
Արմավիր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	9	85.94	8	85.93	0	0.00	0	0.00	1	0.01
Գեղարքունիք	1	0.003	0	0.00	0	0.00	1	0.003	5	0.60	0	0.00	0	0.00	5	0.60	0	0.00
Լոռի	6	2.92	0	0.00	0	0.00	6	2.92	1	0.10	0	0.00	1	0.10	0	0.00	0	0.00
Կոտայք	7	0.03	0	0.00	6	0.02	1	0.01	10	16.49	8	16.48	0	0.00	2	0.01	0	0.00
Շիրակ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	1	2.80	1	2.80	0	0.00	0	0.00	0	0.00
Սյունիք	2	0.004	0	0.00	2	0.004	0	0.00	2	1.50	2	1.50	0	0.00	0	0.00	0	0.00
Վայոց ձոր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00
Տավուշ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	6	0.42	0	0.00	0	0.00	2	0.41	4	0.21
Ընդամենը	24	23.00	0	0.00	14	0.054	10	2.943	50	113.75	29	112.12	2	0.25	11	1.25	8	0.33

2017 թվականի հունվարին հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 6 գործարք (3.26 հա ընդհանուր մակերեսով):

Հանրապետությունում 2017 թվականի հունվարին, 2016 թվականի հունվարի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 48.5 %-ով: Ընդ որում, Երևանում նվազել է 40.0 %-ով, իսկ մարզերում նվազել է 49.0 %-ով:

Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 9.4 %-ով, բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի նկատմամբ՝ 66.7 %-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 76.5 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 50.0 %-ով:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2017 թվականի հունվարին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (հա)	պայմանագրային գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (հա)	շուկայական գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	6	0.98	80.4	1278.8	720.0	43	16.33	365.0	12000.0	3363.0
Ապարան	1	0.61	430.1	430.1	430.1	1	0.49	86.5	2727.3	652.5
Թալին	1	1.05	70.9	70.9	70.9	15	5.59	93.6	5494.5	680.0
Ծաղկահովիտ						4	6.22	79.5	1000.0	422.3
Արարատի մարզ										
Արտաշատ	2	2.77	72.4	73.4	72.9	35	10.42	335.1	10833.3	2700.0
Մասիս						10	5.04	200.0	11904.8	3370.4
Վեդի						16	11.21	207.0	10795.1	2035.0
Արմավիրի մարզ										
Արմավիր						30	11.82	294.3	9090.0	1443.0
Բաղրամյան	8	85.93	70.9	1245.4	218.3	15	92.34	90.6	2561.1	865.0
Վաղարշապատ						12	8.47	444.4	11764.7	2002.5
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						17	8.03	199.8	1875.0	525.0
Ճամբարակ								60.5	953.3	352.0
Մարտունի								51.1	2850.0	750.0
Սևան								52.2	2134.8	360.0
Վարդենիս						9	14.88	41.2	2575.1	363.5
Լոռու մարզ										
Ավվերդի						6	2.98	170.4	6424.2	560.0
Գուգարք								234.6	6065.9	820.0
Սպիտակ								250.0	5555.5	675.0
Ստեփանավան						4	2.92	90.6	1686.6	410.0
Տաշիր						15	8.21	45.3	1384.4	190.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	2	2.50	183.3	242.5	212.9	15	3.50	279.3	11942.7	4034.7
Եղվարդ	3	0.78	307.9	357.1	326.8	14	12.02	174.4	11971.8	2596.0
Հրազդան	3	13.20	341.0	660.2	478.0	10	6.56	130.5	10256.4	1047.2
Շիրակի մարզ										
Ախուրյան						6	6.75	252.0	1693.1	700.0
Ամասիա						2	4.80	40.9	261.0	143.5
Անի						8	7.42	110.6	546.9	470.0
Աշոցք						1	1.63	58.5	215.8	142.0
Արթիկ	1	2.80	965.4	965.4	965.4	28	13.10	79.4	1428.6	549.0
Սյունիքի մարզ										
Գորիս								92.6	1023.2	728.0
Կապան						1	0.52	120.0	841.6	462.5
Մեղրի						3	1.31	193.0	3000.0	832.0
Սիսիան	2	1.50	131.3	140.0	135.6	3	1.60	46.3	1977.4	552.6

Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր						5	0.40	125.0	10000.0	1795.0
Վայք						1	0.68	58.8	1430.7	630.0
Տավուշի մարզ										
Բերդ						3	0.85	213.3	3783.8	720.0
Իջևան						2	0.29	267.5	9454.5	1590.0
Նոյեմբերյան						2	0.44	46.7	7368.4	990.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կախված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2017 թվականի հունվարին բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1000.0 մ² մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (մ ²)	պայմանագրային գները 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (մ ²)	շուկայական գները 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Մտավելագույն	Միջին			Նվազագույն	Մտավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	1	399.0	615.8	615.8	615.8	3	2550.0	130.7	22200.0	2590.0
Ապարան								124.1	609.6	389.5
Թալին						1	249.8	63.2	1454.8	152.5
Ծաղկահովիտ								60.0	214.3	95.0
Արարատի մարզ										
Արտաշատ						3	3030.0	173.9	7140.3	902.5
Մասիս						9	6974.6	187.5	25000.0	1205.8
Վեդի						1	1000.0	126.1	5000.0	664.0
Արմավիրի մարզ										
Արմավիր						15	17719.0	131.6	9090.9	1216.0
Բաղրամյան						1	1300.0	100.0	833.3	240.0
Վաղարշապատ						13	11056.0	197.4	26528.4	1530.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						2	2336.0	186.6	1084.3	683.8
Ճամբարակ								71.3	2286.2	147.0
Մարտունի	5	6000.0	198.0	198.0	198.0	7	8044.0	119.3	5000.0	278.0
Սևան								240.0	3110.4	347.0
Վարդենիս						1	1831.0	72.5	987.2	150.5
Լոռու մարզ										
Ալավերդի								114.3	1388.9	217.0
Գուգարք						2	1198.0	77.9	14083.3	1259.0
Սպիտակ						1	600.0	104.9	1348.3	198.3
Ստեփանավան								88.2	1666.7	176.0
Տաշիր								45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	2	85.3	4644.0	5204.0	4924.0	11	11557.5	264.5	35353.5	1957.0
Եղվարդ						7	5040.5	173.6	27000.0	2853.6
Հրազդան								117.7	34848.5	1320.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						4	6921.0	113.6	18750.0	333.5
Ամասիա								45.3	274.7	72.0
Անի						1	900.0	67.9	180.6	218.0
Աշոցք						1	4727.0	40.8	144.0	65.0
Արթիկ						4	3531.4	111.8	5000.0	217.5

Սյունիքի մարզ										
Գորիս						1	305.0	112.2	1700.0	366.3
Կապան								67.9	2638.9	370.0
Մեղրի						1	1060.0	68.5	632.9	270.0
Սիսիան								123.5	875.0	263.0
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր								96.7	7659.6	508.0
Վայք								120.7	1448.3	250.0
Տավուշի մարզ										
Բերդ								75.8	810.0	131.0
Իջևան	2	4086.1	157.5	3000.0	1578.8	1	1040.0	74.1	14423.1	500.0
Նոյեմբերյան								125.0	1948.1	259.0

2017 թվականի հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 700 վարձակալության գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 7.1 %-ը: Ընդ որում, վարձակալության գործարքի 93.3 %-ն իրականացվել է իրավաբանական անձանց կողմից:

2017 թվականի հունվարին, 2016 թվականի դեկտեմբերի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 6.4 %-ով, իսկ 2016 թվականի հունվարի համեմատ՝ 68.7 %-ով:

2017 թվականի հունվարին հանրապետությունում գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 18 բնակարանի, 21 անհատական բնակելի տան, 190 հասարակական և 350 արտադրական նշանակության օբյեկտի, 120 հողի և 1 ավտոտնակի վարձակալության գործարք: Հողերի կառուցապատման, սերվիտուտի և անհատույց օգտագործման իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2017 թվականի հունվարին Երևան քաղաքում հողերի նկատմամբ գրանցված 1 վարձակալության գործարքի քանակը 2016 թվականի դեկտեմբերի համեմատ նվազել է 87.5 %-ով, իսկ 2016 թվականի հունվարի համեմատ՝ 80.0 %-ով:

2017 թվականի հունվարին հանրապետությունում վարձակալված 1894.61 հա հողից 0.002 հա վարձակալվել է Երևանում: Մարզերում վարձակալված 1894.60 հա հողերից 1882.33 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 3.21 հա արդյունաբերական օբյեկտների, 8.19 հա հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հող վարձակալվել է Վայոց ձորի մարզում՝ 1721.38 հա, որից 1718.17 հա գյուղատնտեսական նշանակության:

2017 թվականի հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 975 գրավադրման գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումների քանակի 9.9 %-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցումների քանակը, 2016 թվականի դեկտեմբերի համեմատ, նվազել է 66.9 %-ով, իսկ 2016 թվականի հունվարի համեմատ՝ աճել 80.6 %-ով:

Գրավադրման գործարքն առավելապես իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների (49.5 %), անհատական բնակելի տների (21.5 %), հասարակական նշանակության օբյեկտների (13.9 %) և հողերի (6.2 %) նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 586 գրավադրման գործարքից ծագող իրավունքի պետական գրանցումների քանակը, 2016 թվականի դեկտեմբերի համեմատ նվազել է 64.7 %-ով, իսկ 2016 թվականի հունվարի համեմատ աճել՝ 96.0 %-ով:

2017 թվականի հունվարին հանրապետությունում գրավադրվել է 1337.13 հա հող, որից 3.24 հա Երևանում: Ընդ որում, գրավադրված հողի 1086.39 հա կամ 81.2 %-ը գյուղատնտեսական նշանակության: Առավել մեծ մակերեսով հող գրավադրվել է Արմավիրի մարզում՝ 1051.03 հա, որից 1049.78 հա գյուղատնտեսական նշանակության:

2017 թվականի հունվարին հանրապետությունում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 66 գործարք: 2017 թվականի հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2016 թվականի դեկտեմբերի համեմատ, նվազել է 62.9 %-ով, իսկ 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ աճել 40.4 %-ով:

Երևանում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 43 գործարք, որը 2016 թվականի դեկտեմբերի համեմատ, նվազել է 63.9 %-ով, իսկ 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ աճել 65.4 %-ով: Մարզերում հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2016 թվականի դեկտեմբերի համեմատ, նվազել է 61.0 %-ով, իսկ 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ աճել 9.5 %-ով:

2017 թվականի հունվարին հանրապետությունում արձանագրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի 964 առաջնային գրանցում՝ առանց գործարքի, որոնց քանակը, 2016 թվականի դեկտեմբերի համեմատ, նվազել է 63.9 %-ով, իսկ 2016 թվականի հունվարի համեմատ՝ աճել 0.9 %-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումներում կազմել է 9.8 %: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում (15.9%):

«Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե